



ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

Ք. _____

« ___ » _____ 2015թ.

«Գոհար 87» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Կատարող, մի կողմից, և _____ այսուհետ՝ «Պատվիրատու» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **Պայմանագրի առարկան**՝ 1.1. սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կազմակերպել և ապահովել Պատվիրատուի կողմից նշված անձանց հանգիստը (այդ թվում՝ սոցիալական փաթեթի շրջանակներում) ՀՀ և ԼՂՀ տարածքում համաձայն ՀՀ օրենսդրության (Ծառայությունների ցանկը ներկայացված է Կատարողի կայքում /www.goldentravel.am/ կամ ներկայացվում է Պատվիրատուի Կատարողին հրապարակված ամսագրերի, բուկլետների միջոցով կամ Կատարողի գործակալների կամ աշխատակիցների կողմից), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար, 1.2. սույն պայմանագրով նախատեսվող ծառայությունները լրացվում են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում : 1.3. սույն պայմանագրում նշված ծառայությունների մատուցման ժամկետն է սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված համապատասխան ժամկետը:

2. **Կողմերի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը**՝ 2.1. Կատարողը պարտավոր է՝ 2.1.1. ծառայությունները մատուցել պատշաճ որակով, 2.1.2. ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում, 2.1.3. Պատվիրատուի պահանջով առավելագույնը 1 օրվա ընթացքում անհատույց վերացնել Կատարողի պատճառով առաջացած բոլոր թերությունները, 2.1.4. Փոխհատուցել սույն պայմանագրի կետերը խախտելու հետևանքով Պատվիրատուի կրած նյութական վնասները, 2.2 Պատվիրատուն իրավունք ունի՝ 2.2.1. ստանալ սույն պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայություններ, 2.2.2 ստանալ անձնական անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքների և գույքի պաշտպանության երաշխիքներ, 2.2.3 օրենքով սահմանված կարգով դիմել դատարան սույն պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, 2.2.4 իր համար հասկանալի լեզվով Կատարողից ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն սույն պայմանագրի պայմանների մասին, 2.2.5 օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից: 2.4. Պատվիրատուն պարտավոր է՝ 2.4.1. պահպանել սույն պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները, 2.4.2. Սույն պայմանագրի հավելված 1-ում նշված ծառայություններից հրաժարվելու դեպքում ծառայությունը ստանալուց առաջ՝ օբյեկտիվ ժամկետում, տեղյակ պահել Կատարողին իր որոշման մասին, 2.4.3. Կատարողին փոխհատուցել Սույն պայմանագրի կետերը խախտելու, սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված ժամանակավոր կացության վայրերում, շրջագայության ընթացքում Պատվիրատուի կամ նրա կողմից լիազորված անձանց գործողությունների հետևանքով կրած նյութական վնասները:

3. **Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը**՝ 3.1. Սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված ծառայությունները սոցիալական փաթեթի շրջանակներում ստանալու համար Պատվիրատուն Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցում է _____ ՀՀ դրամ, որից հյուրանոցային ծառայության արժեքն է _____ ՀՀ դրամ (ներառյալ բոլոր տեսակի հարկերը և տուրքերը)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Փոխանցման Հաշվի, 3.2. սույն պայմանագրի երրորդ օրինակը Պատվիրատուն մինչև սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների ամրագրում կատարելը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է այն բանկին, որը սպասարկում է իր սոցիալական փաթեթի հաշիվը, այսուհետ՝ Բանկ, 3.3. Սոցիալական փաթեթի շրջանակներում փոխանցում կատարելու դեպքում վճարման վերջնաժամկետ է համարվում բյուջետային տարվա վերջին օրը, այլ փոխանցումների համար՝ ամրագրում կատարելու օրը 3.4. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարը Պատվիրատուին կամ իր ժառանգին հետ է վերադարձվում ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: 3.5. Սույն պայմանագրի գինը Պատվիրատուի ցանկությամբ կարող է աճել՝ կախված Պատվիրատուի լրացուցիչ պատվերներից, ինչը նշվում է Սույն պայմանագրի Հավելված 1-ում:

4. **Անհաղթահարելի ուժի ազդեցությունը** (ՖՈՐՍ ՄԱՇՈՐ)՝ Սույն պայմանագրով պատվիրատուներն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից , եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժերը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 15 օրացուցային օրից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. **Վեճերի լուծման կարգը**՝ սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում գործը հանձնվում է դատարանի քննությանը:

6. **Եզրափակիչ դրույթներ**՝ 6.1 սույն պայմանագրի հավելված 1-ում նշված ծառայությունները մատուցված են համարվում, եթե ծառայությունները մատուցելու նախատեսված ժամկետի ավարտից 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի կողմից գրավոր պահանջներ չեն ներկայացվում ծառայությունների որակի կամ ծառայությունների չմատուցման մասով: 6.2 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ կատարողի լիազոր ներկայացուցիչների կողմից, բացառությամբ սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված պայմանագրի գնի՝ Կատարողի կողմից միակողմանիորեն ավելացնելու դեպքի: 6.3 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ. **3-րդ օրինակը տրվում է պատվիրատուին սույն պայմանագրով, ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով Բանկ ներկայացնելու համար:**

Փոխանցման Հաշիվ N _____

Փոխանցման հաշիվը դուրս գրված (Կատարող) անձի	
Անվանում	«Գոհար 87» ՍՊԸ
ՀՎՀՀ	03302316
Հասցե	ՀՀ Կոտայքի մարզ ք. Եղվարդ Սպանդարյան 26
Հեռախոս	010 607 707; 095 907 707
Բանկ	«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
ՀՀ	1810007300180100
Ծառայություններ ստացող (Պատվիրատու) անձի	
Ազգանուն Անուն	
Անձնագրի սերիա, համար	
Հասցե	
Բանկ	
Հ/Հ	
Հեռ.	
Ծառայության անվանումը	Փոխանցման ենթակա գումար
Սոցիալական փաթեթով հանգստի կազմակերպում	

Պատվիրատու՝ _____

Կատարող՝ _____ Տնօրեն Մ. Արշակյան